ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 381-Ա « 26 » հունվարի 2026թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
26.01.2026թ.
հ. 381-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	«ԱՐՄ-ՇԻՆ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ	Գ-1 թաղամաս, հ.4/123	բնակելի տուն	«ԱՐՄ-ՇԻՆ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ Գ-1 թաղամասի հ.4/123 հասցեում գտնվող 119.8քմ մակերեսով բնակելի տանը /վկ.հ. 21012026-01-0387, հող. 170.5քմ, պարիսպ 8.1քմ/ տրամադրել հասցե՝ Գ-1 թաղամաս, հ.4/157	01013GZQNBDA	
2	Գևորգ Հակոբյան	Կ. Հալաբյան փողոց, հ.21 շենք, հ.21	բնակարան	Գևորգ Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող, Կ. Հալաբյան փողոցի հ.21 շենքի հ.21 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.23122025-01-0165, ընդհ. բաժն. 3.6քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 29.8քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Կ. Հալաբյան փողոց, հ.21 շենք, բն.21/1	010134QPRAMT	
3	Մարիամ Հակոբյան /լիազորված անձ/ Վարդան Թովմասյան	Գ-1 թաղամաս, հ.11/6	հողամաս	Վարդան Թովմասյանին սեփականության իրավունքով պատկանող, Գ-1 թաղամասի հ.11/6 հասցեում գտնվող բնակելի տան և շինությունների զբաղեցրած հողամասի /վկ. հ.29082025-01-0153/ բաժանման հատակագծով առանձնացվող 500.0քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Գ-1 թաղամաս, հ.6/33	01013LP7YKLL	
4	Մարիամ Հակոբյան /լիազորված անձ/ Վարդան Թովմասյան	Գ-1 թաղամաս, հ.11/6	բնակելի տուն	Վարդան Թովմասյանին սեփականության իրավունքով պատկանող, Գ-1 թաղամասի հ.11/6 հասցեում գտնվող /վկ. հ.29082025-01-0153, հող՝ 500.0քմ/ մնացորդային բնակելի տանը և շինություններին տրամադրել հասցե՝ Գ-1 թաղամաս, հ.6/34	010139NS8UNR	

5	Արմեն Բորիսով	Ն. Շենգավիթ փողոց, հ.1/2 շենք, հ.165ա	բնակարան	Անշարժ գույքի առուվաճառքի 23.12.2025թ. հ.6106 պայմանագրով, Արմեն Բորիսովի կողմից ձեռք բերված, Ն. Շենգավիթ փողոցի հ.1/2 շենքի հ.165ա հասցեում գտնվող բնակարանին տրամադրել հասցե՝ Շահամիրյանների փողոց, հ.1/2 շենք, բն.72/2	01113T9EVRJU	
6	Ռոբերտ Շահնազարի	Ա. Գրիբոյեդովի փողոց, հ.21/6 շենք, հ.71 և հ.72	բնակարան	Ռոբերտ Շահնազարիին սեփականության իրավունքով պատկանող, Ա. Գրիբոյեդովի փողոցի հ.21/6 շենքի հ.71 և հ.72 հասցեներում գտնվող բնակարաններին /վկ. հ.08072014-01-0088 և հ.08072014-01-0152/ ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Ա. Գրիբոյեդովի փողոց, հ.21/6 շենք, բն.71-72	01033G3KKWFR	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**